

Բաց նամակ
ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին
ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին

Գյումրիում «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող բնակարանաշինության սեյսմակայունության շուրջ առկա մտահոգությունների և որակի հրապարակային փորձաքննություն անցկացնելու խնդրի մասին

Հարգելի պարոն նախագահ և պարոն վարչապետ.

2009 թվականին, երբ աղետի գոտում և հատկապես Գյումրիում երկարատև դադարից հետո վերջապես վերսկսվեց բնակարանների կառուցումը, ցուրտ ու խոնավ տնակներում արդեն երկու տասնամյակ պատսպարված անօթևան հազարավոր ընտանիքներում կրկին հույս ու հավատ արթնացավ, որ ի վերջո իրենք ևս կունենան ամուր, հարմարավետ և լուսավոր բնակարաններ: Սակայն դեռևս շինարարության ընթացքում գյումրեցի անօթևան ընտանիքների շրջանում խոսակցություն տարածվեց կառուցվող բնակարանների կասկածելի որակ ունենալու մասին: Եվ խոսքը ամենևին հարդարման աշխատանքների որակի մասին չէ...

Անշուշտ, կառուցվող բնակարանների ամրության վերաբերյալ անօթևանների մտահոգությունը բացատրելի է, քանզի 1988-ի երկրաշարժի հիշողությունները դեռևս թարմ են:

Մեր կազմակերպությունը 2009 թ. դեկտեմբերի 1-ից *Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացնում է «Աղետի գոտու անօթևանների իրավունքների պաշտպանություն, բնակարանների բաշխման գործընթացի՝ պայմանագրերի և հերթացուցակների հանրային մոնիթորինգ» ծրագիրը:* Այդ ծրագրի շրջանակներում մեր հանդիպումներն ու դիտարկումները ցույց տվեցին, որ նման տեղեկությունները իրոք արժանի են ուշադրության, քանզի դրանք հիմնականում տարածվում են հենց նույն «Գլենդել Հիլզի» շինարարական աշխատանքներում ընդգրկված շինարարների կողմից:

Ցավալի է նաև այն փաստը, որ մինչև օրս որևէ իրազեկ պաշտոնյայի կողմից այդ խոսակցությունները պատշաճ կերպով չեն հերքվել և հասարակությանը պարզաբանում չի տրվել առկա մտավախությունները փարատելու համար:

Ուստի դիմում ենք Ձեզ, ակնկալելով Ձեր միջամտությունը՝ ստեղծելու մի փորձագիտական հանձնաժողով, որը կանցկացնի ինչպես արդեն կառուցված ու կառուցվող, այնպես էլ առաջիկայում կառուցվելիք շենքերի որակի, ամրության ու սեյսմակայունության հրապարակային փորձաքննություն եւ արդյունքները կհանրայնացնի: Մենք ակնկալում ենք, որ նման հանձնաժողով ստեղծելու դեպքում դրանում համապատասխան մասնագետներից բացի կընդգրկվեն նաև աղետի գոտում գործող ՁԼՄ, ՀԿ և անօթևան ընտանիքների ներկայացուցիչներ: Այլապես անհնար կլինի առանց այդ էլ մեծ վիշտ և զրկանքներ կրած անօթևանների մեջ փարատել վախն ու անհանգստությունը: Նման հանձնաժողովի ստեղծումը և եզրակացությունների հանրայնացումը նաև վերջ կդնեն այն տեսակետներին, թե իբր կառուցվող շենքերի կասկածելի ամրության մասին խոսակցությունները տարածվում են միտումնավոր, որպեսզի նման հասարակական կարծիքը օգտագործվի որպես հարմար առիթ՝ բնակարանային շինարարությունը Գյումրիում դադարեցնելու

համար:

Հարգանքով՝

Վահան Թումասյան

<<Շիրակ կենտրոն>> ՀԿ նախագահ

18 հունվարի 2010 թ.

Ստուգումներ են անցկացվում



ՀՀ իշխանությունների որոշմամբ՝ արդեն մի քանի օր է, ինչ Գյումրու Մուշ 2 թաղամասում, «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի նորակառույց բնակելի շենքերի սեյսմակայունության համալիր ստուգումներ են սկսել անցկացնել «Հայսեյսմշին» գիտահետազոտական ինստիտուտի մասնագետները:

«Շիրակ կենտրոն» ՀԿ-ն հունվարի 18-ին նման պահանջով բաց նամակ էր հղել ՀՀ նախագահին և վարչապետին: Նամակում մասնավորապես ասվում էր. «2009 թվականին, երբ աղետի գոտում և հատկապես Գյումրիում երկարատև դադարից հետո վերջապես վերսկսվեց բնակարանների կառուցումը, ցուրտ ու խոնավ տնակներում արդեն երկու տասնամյակ պատասպարված անօթևան հազարավոր ընտանիքներում կրկին հույս ու հավատ արթնացավ, որ ի վերջո իրենք ևս կունենան ամուր, հարմարավետ և լուսավոր բնակարաններ: Սակայն դեռևս շինարարության ընթացքում գյումրեցի անօթևան ընտանիքների շրջանում խոսակցություն տարածվեց կառուցվող բնակարանների կասկածելի որակ ունենալու մասին»:

«Շիրակ կենտրոնը» 2009 թ. դեկտեմբերի 1-ից Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացնում է «Աղետի գոտու անօթևանների իրավունքների պաշտպանություն, բնակարանների բաշխման գործընթացի՝ պայմանագրերի և հերթացուցակների հանրային մոնիթորինգ» ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում հանդիպումներն ու դիտարկումները ցույց տվել, որ նման տեղեկությունները իրոք արժանի են ուշադրության, քանզի դրանք հիմնականում տարածվում են հենց նույն «Գլենդել Հիլզի» շինարարական աշխատանքներում ընդգրկված շինարարների կողմից:

Այնուհետև «Շիրակ կենտրոն» ՀԿ-ն նույն նամակով առաջարկել էր որ ստեղծվի մի փորձագիտական հանձնաժողով, որը կանցկացնի ինչպես արդեն կառուցված ու կառուցվող, այնպես էլ առաջիկայում կառուցվելիք շենքերի որակի, ամրության ու սեյսմակայունության հրապարակային փորձաքննություն և արդյունքները կհանրայնացնի:

Այս մասին տեղեկացնում է «Շիրակ կենտրոն» հ/կ-ի մամլո ծառայությունը:

Hetq.am

26 հունվարի 2010 թ.

ՄԵՅՄՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻԲ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԳՅՈՒՄՐՈՒ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ

Գ. Մ.

Ըստ Գյումրիում գործող Քաղաքական մշակույթի եւ համաձայնությունների զարգացման «Շիրակ կենտրոն» ՀԿ-ից ստացված տեղեկատվության, արդեն մի քանի օր է, ինչ հանրապետության իշխանությունների որոշմամբ «Հայսեյսմշին» գիտահետազոտական ինստիտուտի մասնագետները Գյումրու Մուշ-2 թաղամասում «Գլենդել հիլզ» ընկերության նոր կառուցած բնակելի շենքերի սեյսմակայունության համալիր ստուգումներ են սկսել իրականացնել:

Ինչպես «Ազգը» տեղեկացրել է, Գյումրիում երկրաշարժից անօթեւան ընտանիքների իրավունքների պաշտպանության ծրագիր իրականացնող «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպությունը հունվարի 18-ին տարածել էր ՀՀ նախագահին եւ վարչապետին ուղղված բաց նամակ, որում մտահոգություն արտահայտելով կառուցվող շենքերի ամրության եւ որակի մասին անօթեւանների շրջանում տարածվող խոսակցությունների առթիվ, առաջարկել էր ստեղծել մի փորձագիտական հանձնաժողով՝ խնդիրը տեղում ուսումնասիրելու եւ արդյունքները հանրայնացնելու նպատակով:

«Շիրակ կենտրոնի» նախագահ **Վահան Թումասյանը** մեզ հեռախոսով տեղեկացրեց, որ համալիր ստուգումների մասին իրենք գրավոր տեղեկացում են ստացել նաեւ ՀՀ քաղաքաշինության նախարարությունից:

Azg.am

2010-01-30